Քաղաքացիական Ծառայության Պաշտոնի Անձնագիր

27-33.6.1-Ղ3-1 Կենտրոնի պետ(2026-01-19)

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Պաշտոնի Անվանում, Ծածկագիր

Ներքին գործերի նախարարություն | Հանցավորության վիճակագրության և հետազոտական կենտրոն | Կենտրոնի պետ, (27-33.6.1-Ղ3-1)

1.2 Ենթակա և հաշվետու է

Կենտրոնի պետն անմիջական ենթակա և հաշվետու է ներքին գործերի նախարարին (այսուհետ՝ Նախարար):

1.3 Ենթակա և հաշվետու պաշտոններ

Կենտրոնի պետին անմիջական ենթակա և հաշվետու են Կենտրոնի պետի տեղակալները և Կենտրոնի բաժինների պետերը:

1.4 Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Կենտրոնի պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Կենտրոնի պետի տեղակալներից մեկը կամ Կենտրոնի բաժինների պետերից մեկը:

1.5 Աշխատավայր

Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Նալբանդյան 130:

---

2. Պաշտոնի բնութագիր

2.1 Աշխատանքի բնույթը (գործառույթներ), Իրավունքները, Պարտականությունները

1. կազմակերպում է հանցագործությունների և դրանք կատարած անձանց, վարչական իրավախախտումների և դրանք կատարած անձանց, քրեական հետապնդման ենթարկված և դատապարտված անձանց միասնական հանրապետական հաշվառումների վարումը.
2. կազմակերպում է հետախուզվող անձանց, անհայտ կորած անձանց, չճանաչված դիակների և իրենց ինքնության վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու ունակություն չունեցող անձանց, հափշտակված, կորած և (կամ) հայտնաբերված զենքի, զինամթերքի ու ռազմամթերքի, հափշտակված հնաոճ առարկաների և մշակութային արժեքների, հետախուզվող տրանսպորտային միջոցների, հանցագործությունների հետ կապված համարակալված փաստաթղթերի, իրերի և արժեթղթերի, օպերատիվ հաշվառման գործերի և դրանցով անցնող անձանց, ոստիկանության հետ գաղտնի հիմունքներով աշխատող և համագործակցող անձանց, հատուկ հաշվառման և օպերատիվ արխիվային գործերի, նախկին աշխատողների անձնական արխիվային գործերի միասնական հանրապետական հաշվառումների վարումը.

3. կազմակերպում է հաշվառման ենթակա տվյալների ընդունման, գրանցման, համակարգման, սկզբնական դասակարգման և անհրաժեշտության դեպքում համապատասխան տեղեկատվական համակարգերում ոչ թվային եղանակով ստացված տեղեկատվության մուտքագրման աշխատանքները.
4. կազմակերպում է հաշվառման ներկայացված տվյալների իսկության, ամբողջականության ու սահմանված ձևաչափերին և կարգին համապատասխանության նկատմամբ հսկողության իրականացման աշխատանքները.
5. կազմակերպում է հաշվառման ենթակա տվյալների ճշգրտման, լրացման, վերանայման և թարմացման անհրաժեշտության ստուգումը և աշխատանքների իրականացումը.
6. կազմակերպում է հաշվառման ենթակա տվյալների պահպանության, արխիվացման և օրենքով սահմանված կարգով և դեպքերում ոչնչացման աշխատանքները.
7. կազմակերպում է հաշվառման տվյալների մուտքագրման, պահպանման և արխիվացման մեթոդաբանության մշակման աշխատանքները.
8. կազմակերպում է իրավասու մարմիններին, պաշտոնատար անձանց, ինչպես նաև իրավաբանական և ֆիզիկական անձանց օրենքով սահմանված դեպքերում ու կարգով հաշվառված տվյալների և հարցումներին պատասխանների տրամադրման աշխատանքները.
9. կազմակերպում է տվյալների շտեմարանների մշտադիտարկման իրականացման աշխատանքները՝ ուղղված սխալների և թերի տվյալների բացահայտմանը .
10. կազմակերպում է տարբեր տեղեկատվական աղբյուրներից ստացված տվյալների համադրելիության և համաչափության ապահովման աշխատանքները.
11. կազմակերպում է հանցավորության և վարչական իրավախախտումների վերաբերյալ պաշտոնական վիճակագրության ձևավորման աշխատանքները.
12. կազմակերպում է պարբերական վիճակագրական հաշվետվությունների, տեղեկատվական բնույթի փաստաթղթերի, ամփոփ տեղեկանքների և թեմատիկ վիճակագրական ժողովածուների կազմման ու Նախարարությանը, Ոստիկանությանը և իրավասու այլ պետական մարմիններին դրանց տրամադրման աշխատանքները.
13. կազմակերպում է վիճակագրության և հաշվառված այլ տվյալների շարունակական, դինամիկ ու բազմաստիճան քրեաբանական վերլուծության աշխատանքները՝ վերլուծական և արհեստական բանականության գործիքների կիրառմամբ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության կամ առաջարկությունների հիման վրա թիրախային և թեմատիկ վերլուծությունների իրականացման աշխատանքները՝ հաշվի առնելով տարածքային, ժամանակային, ռիսկային խմբերի, հանցատեսակների և այլ համապատասխան դասակարգումները, ներառյալ՝ հանցավորության միտումների վերլուծությունը, ինչպես նաև հանցագործությունների աշխարհագրական քարտեզավորումն ու բարձր ռիսկայնության գոտիների հայտնաբերումը.
14. կազմակերպում է զոհացման և այլ հարցումների անցկացման, դրանց արդյունքների ամփոփման աշխատանքները.
15. կազմակերպում է տեղեկատվության փոխանակման կազմակերպումը Նախարարության, Ոստիկանության կառուցվածքային ստորաբաժանումների և իրավասու այլ պետական մարմինների հետ, ինչպես նաև վերջիններիս հետ տեղեկատվության փոխանակման արդյունավետության բարձրացման նպատակով համագործակցությունը.
16. կազմակերպում է իրավասու մարմիններին, պաշտոնատար անձանց, իրավաբանական և ֆիզիկական անձանց, ինչպես նաև միջազգային կազմակերպություններին վիճակագրական տեղեկատվության տրամադրումը՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված դեպքերում ու կարգով.
17. կազմակերպում է օրենքով սահմանված դեպքերում օտարերկրյա պետությունների իրավասու մարմինների և միջազգային կազմակերպությունների հետ տեղեկատվության փոխանակման իրականացումը, այդ թվում՝ օտարերկրյա պետությունների իրավապահ մարմինների միջպետական ինֆորմացիոն բանկ հաշվառման ենթակա տեղեկատվության սահմանված ձևաչափով ու կարգով ներկայացումը, ինչպես նաև օտարերկրյա պետությունների իրավապահ մարմինների կողմից միջպետական ինֆորմացիոն բանկ ներկայացված տեղեկատվության սահմանված ձևաչափով ու կարգով հաշվառումը ու դրա տրամադրումը Նախարարության ու Ոստիկանության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումներին և օրենքով նախատեսված դեպքերում՝ իրավասու այլ պետական մարմիններին.
18. կազմակերպում է քանակական և որակական հետազոտական մեթոդաբանությունների, ինչպես նաև գիտական ուսումնասիրությունների համար սահմանված այլ ընդունված մեթոդների կիրառմամբ քրեաբանական, սոցիոլոգիական, վիճակագրական և միջդիսցիպլինար

հետազոտությունների իրականացման աշխատանքները.
19. կազմակերպում է հանցավորության կառուցվածքի, շարժընթացի, միտումների, տարածքային բաշխման, օրինաչափությունների, պատճառների, պայմանների ու նպաստող գործոնների ուսումնասիրության աշխատանքները.
20. կազմակերպում է հանցավորության կանխարգելման և դրա դեմ պայքարի ոլորտում իրականացվող ծրագրերի և միջոցառումների ուսումնասիրումը, դրանց արդյունավետության գնահատումը ու բարելավման նպատակով առաջարկությունների ներկայացման աշխատանքները.
21. կազմակերպում է հանցավորության կանխարգելման և դրա դեմ պայքարի ոլորտին առնչվող իրավական ակտերի ու այլ նախագծերի ու առաջարկությունների ու ռազմավարական փաստաթղթերի ուսումնասիրումը, Կենտրոնի լիազորությունների շրջանակներում դրանց մշակման աշխատանքներին մասնակցությունը.
22. կազմակերպում է ՆԳ նախարարությանը և այլ պետական մարմիններին քաղաքականության մշակմանն ու որոշումների ընդունմանն աջակցող առաջարկությունների ու ուղղորդող նյութերի ներկայացման աշխատանքները.
23. կազմակերպում է թեմատիկ, նպատակային և հանցավորության տարբեր դրսևորումների վերաբերյալ համալիր հետազոտությունների իրականացման աշխատանքները.
24. կազմակերպում է միջազգային լավագույն փորձի, առաջատար գիտական մոտեցումների ուսումնասիրության, Կենտրոնի գործունեության հետ համեմատության ու համապատասխան բարելավումների իրականացման աշխատանքները.
25. կազմակերպում է Կենտրոնի կողմից իրականացվող հետազոտությունների մեթոդաբանական շրջանակի մշակման և անընդհատ կատարելագործման աշխատանքները.
26. կազմակերպում է հետազոտական աշխատանքների հրապարակման, զեկույցների, վերլուծական հոդվածների, գիտական հրապարակումների և այլ ձևաչափերով արդյունքների հանրայնացման աշխատանքները.
27. կազմակերպում է գիտակրթական և գիտահետազոտական հաստատությունների, բուհերի, փորձագիտական կենտրոնների հետ համագործակցությունը՝ համատեղ հետազոտությունների իրականացման, փորձագիտական գիտելիքների փոխանակման և Կենտրոնի հետազոտական կարողությունների զարգացման նպատակով.
28. կազմակերպում է ոչ ստանդարտ աճերի, նոր միտումների կամ ռիսկերի վաղ հայտնաբերման և համապատասխան կանխարգելիչ արձագանքի պլանավորումը ապահովելու նպատակով վիճակագրական վաղ զգուշացման համակարգերի կիրառման աշխատանքները.
29. կազմակերպում է հանցավորության վերաբերյալ կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ կանխատեսումների իրականացման աշխատանքները.
30. կազմակերպում է հանցավորության առաջնային ռիսկերի ու սպառնալիքների բացահայտման, գնահատման և տարածական քարտեզագրման աշխատանքները.
31. կազմակերպում է հանցավորության հիմնական երկարաժամկետ սպառնալիքներիի գնահատման, դրա հիման վրա սպառնալիքների գնահատման զեկույցի մշակման և հրապարակման աշխատանքները.
32. կազմակերպում է կիրառվող թվային հարթակի, վերլուծական և արհեստական բանականության գործիքների մոնիթորինգի, արդյունավետության ու հուսալիության գնահատման, խնդիրների ու թերությունների վերհանման ու դրանց հասցեագրման աշխատանքները.
33. կազմակերպում է հանցավորության դեմ պայքարի ռազմավարական պլանավորման համար վերլուծական գործիքների մշակման աշխատանքները.
34. կազմակերպում է արհեստական բանականության և առկա թվային այլ նորարարական գործիքների փորձարկման և ներդրման աշխատանքները.
35. կազմակերպում է Կենտրոնի աշխատողների կողմից թվային գործիքների կիրառման ընթացքի, որակի, թիրախայնության նկատմամբ վերահսկողությունը, թվային գործիքների կիրառման որակի բարձրացմանը ուղղված քայլերի իրականացման, այդ թվում՝ թվային գործիքների կիրառման հետ կապված մեթոդական աջակցության, մասնագիտական խորհրդատվության տրամադրման աշխատանքները.
36. կազմակերպում է հանցավորության տարածման, զարգացման և փոփոխության սցենարների մշակման, իրավասու կառուցվածքային ստորաբաժանումներին դրանց արդյունքների տրամադրման աշխատանքները.
37. կազմակերպում է կանխատեսման և մոդելավորման ալգորիթմների և մեթոդաբանությունների մշակման և կիրառման աշխատանքները.
38. կազմակերպում է Կենտրոնի թվային ենթակառուցվածքի արդիականության աշխատանքները.

39. կազմակերպում է Կենտրոնի իրավասության ոլորտին առնչվող քննարկումներին, խորհրդակցություններին, միջոցառումներին և այլ աշխատանքային հանդիպումներին մասնակցությունը.
40. կազմակերպում է Կենտրոնի գործառույթներին վերաբերելի կառավարչական բնույթի հրամանների, ցուցումների և այլ նախագծերի մշակման և հաստատման ներկայացման աշխատանքները:

Իրավունքները.

• պահանջել և ստանալ հաշվետվություն տվյալների մուտքագրման, պահպանման և արխիվացման, կատարված հաշվառումների իրականացման ընթացքի վերաբերյալ.
• պահանջել և ստանալ միասնական հանրապետական հաշվառումների վարման ենթակա հանցավորության և այլ իրավախախտումների, ինչպես նաև դրանք կատարած անձանց վերաբերյալ տվյալներ, տեղեկատվություն, փաստաթղթեր և այլ նյութեր.
• համագործակցել տարբեր պետական մարմինների և ծառայությունների հետ ստանալ լրացուցիչ տեղեկատվություն, նյութեր.
• պահանջել և ստանալ տեղեկատվություն, կատարել համապատասխան ճշգրտումներ հանցավորության և վարչական իրավախախտումների վերաբերյալ պաշտոնական վիճակագրություն իրականացնելու նպատակով.
• պահանջել տեղեկատվություն պարբերական վիճակագրական հաշվետվությունների, տեղեկատվական բնույթի փաստաթղթերի, ամփոփ տեղեկանքների և թեմատիկ վիճակագրական ժողովածուների կազմման վերաբերյալ.
• պահանջել տեղեկատվություն իրականացված վիճակագրության ու հաշվառված այլ տվյալների քրեաբանական վերլուծության ստուգման նպատակով.
• պահանջել տեղեկատվություն հանցավորության առաջնային ռիսկերի ու սպառնալիքների բացահայտման, գնահատման և տարածական քարտեզագրման աշխատանքները ստուգելու, սպառնալիքների գնահատման զեկույց նախապատրաստելու նպատակով.
• ներգրավել Կենտրոնի ծառայողներին շտեմարանների տվյալների մշտադիտարկման իրականացման աշխատանքներում.
• պահանջել անհրաժեշտ տեղեկատվություն, նյութեր, մասնագիտական կարծիքներ և առաջարկություններ հանցավորության տարածման, զարգացման և փոփոխության սցենարների մշակման նպատակով.
• պահանջել անհրաժեշտ տեղեկատվություն, նյութեր, մասնագիտական կարծիքներ և առաջարկություններ հանցավորության դեմ պայքարի ռազմավարական պլանավորման համար վերլուծական գործիքների մշակման նպատակով.
• Կենտրոնի առջև դրված նպատակների և խնդիրների իրականացման նպատակով կարող է համագործակցել կրթական և գիտահետազոտական, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների հետ.
•պահանջել և ստանալ քրեաբանական վերլուծությունների և հետազոտությունների արդյունքների, քաղաքականության մշակման համար ուղղորդող նյութեր ու տեղեկատվություն .
• հանցավորության կանխարգելման ոլորտում ապացուցահեն քաղաքականություն մշակելու ու իրականացելու համար պահանջել և ստանալ հանցավորության կանխարգելման և դրա դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանն ուղղված առաջարկություններ.

Պարտականությունները.

• գնահատել տեղեկատվական համակարգերում ոչ թվային եղանակով ստացված տեղեկատվության մուտքագրման աշխատանքները և դրանց իրականացման մեթոդաբանության վերաբերյալ ներկայացնել առաջարկություններ, տալ խնդիրների լուծման առաջարկներ.
• վերլուծել Կենտրոնի կողմից Հայաստանի Հանրապետությունում հանցագործությունների, այլ իրավախախտումների և դրանք կատարած անձանց վերաբերյալ հաշվառման նպատակով ստացված տեղեկատվությունը, նյութերը.
• ստուգել տարբեր տեղեկատվական աղբյուրներից ստացված տվյալների իսկությունը և համապատասխանությունը պահանջվող ձևաչափերին.
• հաշվառումների մեթոդների կիրառման արդյունավետության բարձրացման նպատակով ՆԳ նախարարին ներկայացնել առաջարկություններ տվյալների մուտքագրման, պահպանման գործընթացները կատարելագործելու, նորագույն տեխնիկական միջոցներ ձեռք բերելու և օգտագործելու

վերաբերյալ.
• ուսումնասիրել միջազգային առաջավոր փորձը, առաջատար գիտական մոտեցումները, վերլուծել արդյունքները, հետազոտությունների նորագույն մեթոդների ներդրման վերաբերյալ, ՆԳ նախարարին ներկայացնել զեկույցներ հետազոտական աշխատանքների և դրանց իրականացման մեթոդաբանության վերաբերյալ.
• հետազոտությունների և ուսումնասիրությունների մեթոդ¬ների կիրառման արդյունավետության բարձրացման նպատակով ՆԳ նախարարին ներկայացնել առաջարկություններ Կենտրոնի գործունեության բարելավման շրջանակներում նորագույն տեխնիկական միջոցներ ձեռք բերելու և օգտագործելու վերաբերյալ.
• ուսումնասիրել շտեմարանների տվյալների մշտադիտարկման իրականացման աշխատանքները և վերհանել բացթողումները, առաջարկել լուծումներ սխալների և թերությունների բացահայտման նպատակով.
• ուսումնասիրել շտեմարանների տվյալների մշտադիտարկման արդյունքում ստացված արդյունքների վերլուծությունները և պարբերաբար ՆԳ նախարարին ներկայացնել համապատասխան տեղեկատվություն.
• վերահսկել իրավասու մարմիններին, պաշտոնատար անձանց, ինչպես նաև իրավաբանական և ֆիզիկական անձանց օրենքով սահմանված դեպքերում ու կարգով հաշվառված տրամադրվող տվյալների և հարցումներին պատասխանների ճշտությունը.
• վերլուծել հաշվառման ենթակա տվյալների ճշգրտման, լրացման, վերանայման և թարմացման անհրաժեշտությունը, ներկայացնել զեկույցներ ՆԳ նախարարին:
• վերահսկել հաշվառման ենթակա տվյալների պահպանության, արխիվացման և օրենքով սահմանված կարգով և դեպքերում ոչնչացման աշխատանքները.
• վերահսկել հանցագործությունների, այլ իրավախախտումների, դրանք կատարած անձանց, ինչպես նաև հանցավորությանը առնչվող այլ տեղեկատվության վերաբերյալ տեղեկատվական շտեմարանների ձևավորման աշխատանքները.
• ուսումնասիրել ժամանակակից գործիքների կիրառումը, միջազգային փորձը Կենտրոնի կողմից իրականացվող վիճակագրությունների կազմման և քրեաբանական վերլուծությունների արդյունավետ իրականացման նպատակով.
• վերլուծել ստացված տեղեկատվությունը հանցավորության և վարչական իրավախախտումների վերաբերյալ պաշտոնական վիճակագրություն կազմելու նպատակով.
• ստուգել իրավասու մարմիններին, պաշտոնատար անձանց, իրավաբանական և ֆիզիկական անձանց, ինչպես նաև միջազգային կազմակերպություններին Կենտրոնի կողմից տրամադրվող վիճակագրական տեղեկատվության ամբողջությունը, իրավաչափությունը.
• ուսումնասիրել հաշվառված տվյալները և կազմված վիճակագրությունները, ստուգել անհրաժեշտ փաստաթղթերը, տեղեկատվությունը և ներկայացված առաջարկությունները, կատարված թիրախային ու թեմատիկ քրեաբանական վերլուծությունները.
• վերահսկել օտարերկրյա պետությունների իրավասու մարմինների և միջազգային կազմակերպությունների հետ տեղեկատվության փոխանակման իրականացման գործընթացները.
• ստուգել օտարերկրյա պետությունների իրավապահ մարմինների միջպետական ինֆորմացիոն բանկ հաշվառման ենթակա տեղեկատվության ներկայացման համապատասխանությունը սահմանված ձևաչափին ու կարգին.
• ստուգել հանցավորության վերաբերյալ վերաբերյալ տեղեկատվությունը, իրականացված համալիր հետազոտությունները, հանցավորության կառուցվածքի, շարժընթացի, միտումների, տարածքային բաշխման, օրինաչափությունների, պատճառների, պայմանների ու նպաստող գործոնների վերաբերյալ մշակված վերլուծությունները, կազմված զեկույցները, վերլուծական հոդվածները, գիտական հրապարակումները ներկայացնել հրապարակման .
• ուսումնասիրել հանցավորության վերաբերյալ կանխատեսումները, հանցավորության առաջնային ռիսկերը ու սպառնալիքները բացահայտելու, գնահատելու և տարածական քարտեզագրում իրականացնելու նպատակով ստացված և Կենտրոնի կողմից տիրապետվող տեղեկատվությունը, նյութերը, ՆԳ Նախարարին ներկայացնել արդյունքների վերաբերյալ հաշվետվություններ.
• ուսումնասիրել Կենտրոնի ծառայողների կողմից հանցավորության ոչ ստանդարտ աճերի, նոր միտումների կամ ռիսկերի վաղ հայտնաբերման վերաբերյալ կազմված նյութերը և քննարկել համապատասխան կանխարգելիչ միջոցառումների վերաբերյալ ներկայացված առաջարկությունները.
• հանցավորության վերաբերյալ կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ կանխատեսումներ իրականացնելու նպատակով ուսումնասիրել և վերլուծել ստացված տեղեկատվությունը, գործընթացի իրականացման արդյունավետության վերաբերյալ ներկայացնել առաջարկություններ.

• վերլուծել հանցավորության կանխարգելման և դրա դեմ պայքարի ոլորտին առնչվող նախագծերի վերաբերյալ ստացված առաջարկությունները, ուսումնասիրել ռազմավարական փաստաթղթերը, ներկայացնել ՆԳ Նախարարին զեկույցներ այդ փաստաթղթերի մշակման գործընթացների վերաբերյալ.
• ստուգել հանցավորության տարածման, զարգացման և փոփոխության սցենարների մշակման արդյունքների վերաբերյալ տրամադրվող տեղեկատվությունը.
• ուսումնասիրել և վերհանել Կենտրոնի աշխատողների կողմից իրականացվող գործառույթների իրականացման նոր թվային գործիքների կիրառման անհրաժեշտության, որակի բարելավման ուղղված հարցերը.
• ներկայացնել առաջարկություններ ՆԳ նախարարին արհեստական բանականության և առկա թվային այլ նորարարական գործիքների փորձարկման և ներդրման աշխատանքների վերաբերյալ.
• վերլուծել Կենտրոնի աշխատողների կողմից թվային գործիքների կիրառման ընթացքը, որակը, թվային գործիքների կիրառման որակի բարձրացման վերաբերյալ ՆԳ Նախարարին ներկայացնել առաջարկություններ.
• վերահսկել Կենտրոնի թվային ենթակառուցվածքի վերարտադրողականության աշխատանքները և ՆԳ նախարարին ներկայացնել տեխնոլոգիական բարելավումների վերաբերյալ առաջարկություններ .
• պարբերաբար ներկայացնել տեղեկատվություն ՆԳ Նախարարին Կենտրոնի կողմից իրականացվող աշխատանքների վերաբերյալ.
• հետևել Կենտրոնի գործառույթներին առնչվող հրամանների, որոշման նախագծերի, տեղեկանքների, գրությունների և այլ փաստաթղթերի նախապատրաստման ու ստորագրման ներկայացման, ինչպես նաև ոլորտին առնչվող տեղեկատվությունների փոխանակման աշխատանքներին.
•համագործակցել տարբեր պետական մարմինների և ծառայությունների, Նախարարության մյուս կառուցվածքային ստորաբաժանումների, Նախարարությանը ենթակա մարմինների և կազմակերպությունների, ինչպես նաև այլ պետական մարմինների, այդ թվում՝ պետական վիճակագրության ոլորտում լիազորված մարմնի, իրավապահ և դատական իշխանության մարմինների հետ:

---

3 Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1 Կրթություն, որակավորման աստիճանը

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

3.2 Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

3.3 Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ իրավունքի կամ սոցիոլոգիայի կամ տնտեսագիտության կամ մաթեմատիկայի բնագավառում՝ վիճակագրի կամ համակարգչային համակարգերի մշակման և վերլուծության բնագավառում՝ չորս տարվա աշխատանքային ստաժ:

3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաներ

- ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ

    - Խնդրի լուծում
    - Բարեվարքություն
    - Քաղաքականության վերլուծություն, մոնիթորինգ
    - Որոշումների կայացում
    - Ծրագրերի կառավարում
    - Աշխատակազմի կառավարում
- ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ
    - Բանակցությունների վարում
    - Փոփոխությունների կառավարում
    - Կոնֆլիկտների կառավարում
    - Տեղեկատվական տեխնոլոգիաներ և հեռահաղորդակցություն
    - Բողոքների բավարարում
    - Ժամանակի կառավարում
    - Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում

---

4 Կազմակերպական շրջանակ

4.1 Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի մեկ ոլորտի համար իրավասու կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

4.2 Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի մեկ ոլորտի համար իրավասու կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

4.3 Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի մեկ կառուցվածքային ստորաբաժանման գործունեության վրա ազդեցություն և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց և մարմինների վրա ազդեցություն և ազդեցությունը սահմանափակվում է համապետական մակարդակով որոշակի ոլորտով:

4.4 Շփումները և ներկայացուցչությունը

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ ներկայացնելով համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը:

4.5 Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային ստորաբաժանման խնդիրները և դրանց տալիս է լուծումներ: